



**ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՒՆԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Ավելի քան հազար հինգ հարյուր տարիներ են անցել այն օրից, երբ հայ ժողովով մի բուռ քաջարի կավակներ Տղմուտ գետի ափին Ավարայրի դաշտ ելան ընդդեմ չարի և բռնության՝ փրկելու համար իրենց հավատը, պատիվը և հողը հայրենի:

Հազար հինգ հարյուր տարիներից ի վեր հայ ժողովուրդը մեծ շուքով ու խանդավառությամբ տոնում է Ս. Վարդանանց նահատակների խնկելի հիշատակը, հիշատակ, որ խորհրդապաշտական երևոյթ է դարձել մեր ժողովուրդի համար: Երբ ասում ենք Ավարայր, Տղմուտ գետ կամ Վարդանանց հերոսամարտ, ակամայից հասկանում ենք անձնակի քաջություն և հերոսություն, անսասան ու վեհ հավատք, հոգու և խղճի ազատության գոտեմարտ, գյոյտթան հաղթանակ և անմահություն: Ճիշտ է, Ս. Վարդան զորավարն ու իր նիկակակիցներն ընկան կովի դաշտում, սակայն նրանք նահատակվեցին ողջախոհ այն գիտակցությամբ, որ «Սահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

Այս, նրանք անմահ են, որովհետև եթե վինակորը, իր արյունն է հեղում ի պաշտպանություն «հաւատոյ և հայրենեաց», ապա նրա հիշատակը իր ժողովորի սրտում կմնա որպես անմահության ու փառքի անձեռակերտ հուշարձան:

**Փետրվարի 11, Երկուշաբթի:**

Այսօր Մայր տաճարի Ավագ և սեղանի վրա և պատարագ է մատուցում գերազնորի Տ. Արսեն եպս. Բերբերյանը: Այս օրը առանձնակի ուրախություն է մեր Եկեղեցու համար, որովհետև տոնելով հիշատակը «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմի», մենք տոնում ենք նաև անվանակոչությունը «Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի Ամենայն Հայոց»:

Ս. պատարագի բոլոր մասնակիցներն առանձնակի հանդիսավորությամբ և հոգումով էին կատարում և պատարագի երգեցողությունը:

Ս. պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետը Եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Պատարագիչ սրբազնը Խջման և սեղանից քարոզ է խոսում «Սահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» բնաբանով: Իր քարոզի ընթացքում սրբազն հայրը վեր հանելով Ս. Վարդանանց հերոսների նահատակության արժեքը և խորհուրդը՝ ի մասնավորի ասում է. «Ճիշտ է, նահատակվեցին հայ վինակորներն իրենց զորավարի հետ, բայց նրանք բարոյապես հաղթեցին թշնամուն:



ՍՈՒՐԲ Էջմիածին

Ասում ենք բարոյապես հաղթեցին, որովհետև պատերազմից հետո Հայաստանում կատարվեցին մի շարք այսպիսի քաղաքական, տընտեսական և վարչական փոփոխություններ, որոնց համար էլ հայ վիճակուները կրվի դաշտ էին նետվել և թվական անհավասար պայքարում, մինչև արյան վերջին կաթիլը կովել իրենց դարավոր ու ներգ թշնամու դեմ: Վարդանանց հերոսամարտի քաղաքական իմնական դրամապատճառը Հայաստանը ձուելու քաղաքականությունն էր: Սակայն պարսից արքունիքը միավեց, երբ ցանկացավ խլել ժողովոյի ամենանվիրական և սրբազն հավատքը: Հայկերտ Բ-ի կրոնափոխության առաջարկից հետո ժողովորդը հոգու ամբողջ էությամբ զգաց ստեղծված իրավիճակի ողբերգականությունը և ոտքի կանգնեց:

Որևէ ժողովոյի կարելի է գերել, թալանել, սպանել, աքրորել, բայց գերել ու սպանել ժողովորդի հոգին ոչ ոք չի կարող:

Քարովի վերջում սրբազնը ջնորհավորում է Վեհափառ Հայրապետին անվանակոչության տոնի առջիվ և ցանկանում է Նրան քաջառողջությունն և երկու տարիների բեղմանվել հովվապետություն Ս. Գրիգոր Լուսավորչի գահի վրա:

Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանքի հոգեպարարարությունը:

Նոյն օրը, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում, հոգևոր ճեմարանի ուժերով կազմակերպված, Ս. Վարդանանց տոնին նվիրված հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին մայրավանքի միաբանությունն ու պաշտոնեությունը, հոգեվոր ճեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը, հայրենի մտավորականներ և հավատացյալների հոծ քավություն:

Տերոնական աղոթքի և Սովետական Հայաստանի քայլերգի կատարումից հետո, Վարդանանց օրվա խորհուրդը վեր հանող բացանակ խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուց Տ. Եվսիկ քն. Պետրոսյանը: Ապա ամբոխն է հրավիրվում օրվա բանախոս՝ հոգևոր ճեմարանի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր պրոf. Միմուն Գրքաշարյանը: Հարգարժան բանախոսը հանդես եկավ ընդգրկուն և Վարդանանց հերոսամարտը բազմակողմանիրեն քննող վեկուումով, որտեղ ի մասնավորի ասաց.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորի և հոգեշնորի հայրեն, հարգելի ներկաներ, պաշտոնակիցներ և սիրելի սաներ:

Հավատացյալ հայը, երկրագնդի որ մեկ հատվածում էլ գտնվի, չի մոռանա ամեն տարի այս օրը իր գոլփոր երկուությամբ խոնարհելու ավելի քան 15 դար մեծամիջ առաջ Ավարայրի դաշտում մարտիրոսացած իր մի բուռ նախնիների սրբագործված ու խնկելի հիշատակի առջև: Եվ սա ոչ միայն այս կամ անցյալ և կամ նախանցյալ տարի, այլ հարյուրամյակներ շարունակ: Քանի սա այն տարեթվերից է, որոնք ոչ միայն փրկում են տվյալ պահին մի ամբողջ ժողովուրդ, այլև միաժամանակ պահանջում են այդ ժողովորդի դարավոր գոյատևումը:

Վարդանանց դյուցապնամարտն իր արյամբ վագերացրած սերունդը դրանից դեռևս երկու տասնամյակ առաջ դառնորդեն ապրել էր 750-ամյա հայկական ինքնուրույն պետականության վերացումը: Այս մեծ աղետին, սակայն, հայ ժողովորդի կյանքում նախորդել էին հրաշքի հավասարապոր պատմական խոշրագույն երևույթներ—քրիստոնեության ընդունումը 301 թվականին որպես պետական կրոն և մեկ դար հետո, Մաշտոցի հանձարեղ սիրանքը: Երևույթներ, որոնք պահավորեցին մեր ժողովորդին և, ի հեճովս պատմության աննպաստ հոլովույթին, զարմանալիորեն անխաթար պահեցին հայի նըկարագիրը:

Անդրադառնանք Վարդանանց շարժումը երկնած քաղաքական հանգամանքներին:

Մենք հակված ենք Ավարայրի սկիզբը որոնելու դեռևս Պարսկաստանում Սասայանների իշխանության գոլփու անցնելու ժամանակներում: Ժամանակների, երբ ծնունդ են առնում հայ-պարսկական քաղաքական հանդիսությունները:

Մեր թվականության առաջին երկու դարերը իրավամբ կարելի է համարել հայության գոյակցության ժամանակաշրջան, երբ Հայաստանու և Պարսկաստանու գահակալությունների ունեցած թշնամական գործողությունները: Եվ սա մինչև 226 թվականը, երբ պարսկական գահն անցնում է Սասայաններին, որով դրույթունն արմատապես փոխվում է: <Ես այսու, մինչև արարական նըկագումները, Արշակունյաց Հայաստանի և Սասայան Պարսկաստանի միջև սկսվում է փոխադարձ թշնամականքը, մերթ բացահայտ, մերթ քողարկված:

Հայաստանի հանդեպ Սասայանների առաջին մեծ ոտնձգությունը հայոց Խոսրով թագավորի և նրա ընտանիքի դավադրաբար կոտորվելուն էր Սասայան արքայի գործակից Անակ Պարթևի ձեռքով: Ժոհուպոհից

փրկված երկու մանուկները՝ Խոսրովի որդի Տրդատը և Անակի որդի Գրիգորը, շոտով պիտի սկսենավորեին հայոց պատմության մի նոր դարագլուխ ու դաշնային մեր պատմության մեծերը: «Եթանոս Հայաստանը թևակորում է նոր հավատի, քրիստոնեության մայրուղին, որից հետո հակասությունները քրիստոնյա Հայաստանի և մազդեկան Պարսկաստանի միջև հետպիետե պետք է ավելի ու ավելի սրբին:

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակվելը պիտի անմիջականորեն անդրադառնար նաև Բյուզանդիայի և Պարսկաստանի փոխհարաբերությունների վրա: Եթե մինչ այդ Հռոմեական կայսրության և Պարսից տերության հարաբերությունների հիմքը Հայաստանի վերաբերմամբ կազմել էին սոսկ քաղաքական ընույթի իրադարձություններն ու խնդիրները, պետական սահմանների ապահովության հարցերը և այլն, ապա 4-րդ դարի սկզբից, քրիստոնեության հաղթանակից հետո, Հռոմեական կայսրության մեջ և Հայաստանում, վերոհիշյալ հարցերի վրա պիտի ավելանար և այդ հարցերի լուծման կարևորագույն շարժադիրներից մեկը պիտի դառնար կրոնական խնդիրը: «Եյերի քրիստոնեություն ընդունելը երկուու է առաջացնում Պարսկաստանի պետական գործիքների մեջ, թե հայերը, կրոնով միացած լինելով Հռոմեական կայսրության հետ, ձգտելու նաև քաղաքականացան մեջձենալու բյուզանդացիներին: Ահա այս հեռանկարը կանխելու ձգտումը մեծապես պայմանավորեց Սասանյան գահակալների՝ 4-րդ դարի առաջին կեսից սկսած անլուր հալածանքները քրիստոնյաների, հատկապես Հայ Եկեղեցու և նրա սպասավորների դեմ:

Ամբողջ 4-րդ դարը գերազանցապես ընթացել է հայ-պարսկական ընդհարումների պայմաններում, երբ սասանյան Շապուհը, Հայաստանի ներսում իրեն դաշնակից ունենալով կենտրոնախուզ հայ նախարարներին, իրար հաջորդող ավերիչ արշավանքներ էր ձեռնարկում Հայաստանի վրա, իսկ Արշակունի թագավորները, բարձրաստիճան հոգևորականության և հայրենասեր նախարարների աջակցությամբ, ընդդիմակայում էին Սասանյան տարածամունքին: Այդ արշավանքների հետևանքով ավերվում էին հայկական հնամենի և մարդաշատ քաղաքները, որոնք հետ այնու պիտի մնային որպես ավերակույտներ, վկայելու համար մեր երկրով մեկ անցած բարբարոս ալիքները:

4-րդ դարի երկրորդ կեսին Արշակունյաց հայկական թագավորության գոյավիճակը հետպիետե դառնում է ճգնաժամային: Ծայր աստիճան աննպաստ էին և արտաքին, և ներքին քաղաքական պայմանները: Ուժեղա-

նում և առավել հաճախակի էին դառնում պարսկական ոտնձգությունները Հայաստանի դեմ: Բյուզանդիայի դաշնակցությունը Հայաստանի հետ տևեց շատ կարճ: Նոյն դարի կեսերից սկսած Բյուզանդիան ևս Հայաստանի նկատմամբ վարում է նվաճողական քաղաքականություն: Արտաքին այս աննպաստ քաղաքական իրադրությունը առավել զգալի պիտի դառնար ինքնուրույնության ձգտող կենտրոնախուզ մի շարք նախարարների ըմբռության հետևանքով: Ավատատեր այդ նախարարները փորձում էին օտարների օգնությամբ հաստատել իրենց իշխանությունը, կանգ չառնելով նույնիսկ երկրի անկախությունը կոհելու առջև:

Հայկական պետականության համար տագնապային այդ տարիներին հայոց թագավորին փորձեց կորավիզ լինել երիտասարդ հայկական Եկեղեցին, որի գործի այդ ժամանակ կանգնած էր մեր Եկեղեցու ամենաեռանդուն հայրերից մեկը, Ներսես կաթողիկոսը, որին ևս մեր ժողովուրդը իրավամբ դասել է իր մեծերի շարքը:

Հայրենիքին ու Եկեղեցուն սպառնացող ահեղ վտանգի առաջ նա արդարացի կերպով մոռացավ թագավորական իշխանության հետ իր ունեցած տարածալայնությունները և ջանաց ըմբռում նախարարներին ներշնչել հավատարմություն և հնապանդրություն գահին: Հայոց հայրաբետը հորդորում էր նախարարներին չըքել Արշակ թագավորին սոսկ այն պատճառով, որ Վերշինս ունահարել էր նախարարների իրավունքները: Ներսես հայրաբետը գիտակցում էր, որ արքայի պայքարը նախարարների դեմ անհրաժեշտ էր ուժեղ կենտրոնական իշխանություն հաստատելու համար. ուստի և դիմելով հայ իշխաններին, նա կոչ էր անում չմերժել ու չըքել «բնակ տիրոջ» Հայաստան աշխարհի:

Վրա հասակ չարաբաստիկ 387 թվականը, երբ քրիստոնյա Բյուզանդիան և մազդեկան Պարսկաստանը իրար միջև բաժանեցին Հայաստանը, նպատակ ունենալով մեր երկրը «արկանել ի ծառայութիւն, զի մի կարասցէ ի մէջ մեր ամբառնալ զգուխ»:

Հայաստանի մեծագույն մասն անցավ պարսկական գերիշխանության տակ, իսկ առավել փոքր մասը բաժին ընկապ Բյուզանդիային: Այս բաժանումը սկիզբ էր դրվում հայ ժողովորդի ողբերգական երկատմանը, որը հետագա դարերի ընթացքում պիտի շարունակվեր պատմական դժնի հանգամանքների բերումով. և դառնար մեր ժողովրդի պատմույթան աննախանձելի յուրահատկություններից մեկը:

Հայաստանի այս առաջին բաժանումից չորս տասնամյակ անց, 428 թվականին, վերացակ Արտաշես Ա-ի իմանած Մեծ Հայքի միա-

ցյալ թագավորությունը: Արտաշես Վերջինի գահակալությունից դժողո, անհեռատես հայ նախարարները դիմում են Սասանյան թագավոր Վուամ Ե Գորին, վերացնելու թագավորական իշխանությունը՝ Հայաստանում: Նախարարների այս հայրենադավ և կործանարար շարժման դեմ փորձում է ծառանալ ևս մեկը մեր ժողովորի մեծերից՝ Սահակ Պարթև կաթողիկոսը: Բայց իրենց ներ ավատափրական շահերին ստրկացած նախարարները չանսացին հայոց կաթողիկոսին: Վուամ Ե-ը, օգտվելով ընձեռված հարմար աղիթից, զահընկեց հայտարարեց հայոց Արտաշես Վերջինին և Հայաստանը դարձրեց պարսից տերության մարզպանություններից մեկը: Եթե քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հաստատելու փաստը պաշտպանական հկոր պատվար դարձավ հայ ժողովորի համար այլակրոն հեթանոս շրջապատման պայմաններում, ապա հայ գրերի ստեղծումը և հայ դպրության սկզբնավորումը եկավ առավել ևս ամրապնդելու այդ պատվարը, դառնալով հայ ժողովորի գոյատևեան ամենահուսափ երաշխիքը:

Սասանյաններին Հավկերտ Բ-ի զահակալության առաջին տարիններին հաջողվեց հայ, վրաց և աղվան հեծելագործների անմիջական աջակցությամբ չենքքացնել քուշանական սպառնալիքը: Դրանով իսկ Պարսկաստանի ձեռքերն ապատվեցին հայերի հետ վերջնական հաշվեհարդար տեսնելու համար:

«Արդ՝ քանի» երկիր կա, որոնց վրա դուք աստվածաբար իշխում եք, որոնց կարող եք սպանել կամ ապրեցնել: Նախ՝ Մեծ Հայոց երկիրը, որը ջատ պիտանի և օգտակար է և նրան կից Վրաց և Աղվանից երկրները... Դուք, մենք և բոլոր արիները գիտեք, թե ինչպես մեծ ու պիտանի է հայոց աշխարհը, բայց մոտ է ու սահմանակից կայսեր իշխանությանը և միևնույն օրենքն ու պաշտամունքի ծեսերն ունի, որի համար կայսրը նրանց վրա ապդեցություն ունի: Եվ եթե մեր կրոնին դարձնենք նրանց և նրանք վարժվեն ու կարողանան հասկանալ, որ ցարդ իրենք մոլորված են եղել, ոտիղ ճանապարհ կգան, և այնուհետև կսիրեն մեզ և Արյաց աշխարհը, և կայսրից, նրա հավատից ու երկրից կենանան: Եվ եթե հայերը սրտանց մերը լինեն, վրացիներն ու աղվանները անպատճառ մերը կինեն», խորհուրդ էր տալիս Միհրներսեհը:

Միհրներսից հայերին ուղարկած հատուկ հրովարտակով պահանջում էր անվերապահուն հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել վրաբաշտականությունը:

«Այ ժողովորի անոնից Հավկերտին գըրված աշխարհաժողովականների պատախան

նամակում դրված է հայերի վճռական որոշումը. ոչինչ չի կարող չենել հայերին իրենց հավատից, «ոչ հրեշտակը, ոչ մարդիկ, ոչ սոր և ոչ հուր, ոչ ջոր և ամենայն վիճը և դան հարուածք»:

Նահանջելու տեղ չկար:

Հաշորդած դեպքերն արդեն հանրահայտ են բոլորին դպրոցական նատարաններից:

Երկրում տարերայնորեն սկսվել էին զանգվածային հոգումները: Առանձնապես նշանակալից են Անգր ավանում տեղի ունեցած դեպքերը, բոցաշոնչ Ղնոնդ Երեցի գլխավորությամբ: Ուտքի ելած հայ ժողովուրդը որոշում է զոհել ամեն ինչ հանուն հավատի և սորը հայրենիքի:

Համաժողովրական ապատամբությունն արդեն իրողություն էր: Սկսվեց Մեծ Ավարայրը մայիսի 26-ին. այս հայոց ապատամբության բարձրակետն էր:

Մեծանուն մատենագիրը հանձնարեղորեն է բանաձեկ Ավարայրի խորհուրդը՝ «Մահիմացեալ անմահութիւն է»:

Պատմագրության մեջ Վարդանանց պատերազմի ընդհանուր գնահատականը տալու փորձերը, իմաստականում, հանգել են մեկ բնորոշման, թե՝ հայերը բարոյապես հաղթեցին: Այս բնորոշումը, սակայն, թվում է թերի և միակողմանի: Վարդանանց պատերազմը ոչ միայն բարյական հաղթանակ բերեց, այլ միաժամանակ և քաղաքական, որովհետև՝ 1) այդ պատերազմի ընթացքում պարսկական բանակը տվեց առավել մեծ կորուսներ, 2) հայ ժողովորի անձնվեր ու հերոսական պայքարը ստիպեց գոռով Հավկերտին հրաժարվելու հայերին պարսկացնելու քաղաքականությունից, նա զորքեր դուրս բերեց Հայաստանից, և համաձայնվեց, որ քրիստոնեությունը ապատուեն դավանեն Հայաստանում, 3) Հավկերտը վերականգնեց հայ իշխանների ու հոգլուրականների իրավունքները, 4) թերևացրեց Հայաստանից գանձվող հարկերը: Այս պատերազմը ամրապնդեց հայ ժողովորի հավատը իր ուժերի նկատմամբ: Այս փաստերը ցոյց են տալիս, որ Վարդանանց պատերազմի հետևանքով հայ ժողովուրդը պահպանեց իր տնտեսական, մշակութային ու կրոնական խթանությունը:

Ավարայրի հերոսներն իրենց սորը արյամբ պատենշեցին մեր ժողովորի հնքնուրությունը, տալով նրան անմահության ուղեգիր: Մեկ համար Ավարայր և գոյամարտ բաները նոյնիմաստ են: Ավարայրի հերոսներն իրենց ամբողջ վեհությամբ հառնում են և հասնում մինչև մեր օրերը, դառնում մեզ ողեկից, իբրև գերագոյն խորհրդանիշ հայրենապիրության և պատասխանության: Հայրենիքի և հավատի այդ անձնուրաց վիճվորների լուսա-

շող անոնները և հերոսական սիրանքները անմոռաց եղել են ու կման դարերի հոլովոյթի մեջ:

Վարդանանց ու Ղևոնդյանց այս տոնի առիվ, պարտ ենք համարում նշել, որ այսօր նաև անվանակոչության տոնն է Ազգին Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի:

Ըստրիավորում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և ի սրտե մաղթում իր գահակալության 30-րդ տարվա առջիվ, որ Տերը երկար կյանք պարզեցի Նորին Սուրբ Օծությանը ի փառ Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի, որ ի Հայու և ի պիտու աշխարհի:

Բանախոսությունից հետո հոգևոր ձեմարանի ուսանողների ջանքերով իրականացվում է մի կոկիկ գրական, երաժշտական ծրագիր, կարդացվում են հատվածներ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից, Եղիշե Պատրիարքի «Կարմիր զօրավար» պետմից, արտասանվում են Վ. Թեքեյանի «Մահերգ նահատակաց» և «Հարության ջունչն է ահա» բանաստեղծությունները, հնչում են «Ով դու բարեկամ», «Նորահրաշ» «Լոեց» և «Հայրենիք» երգերը:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետն օրվա տոնի առջիվ մաղթանքի և օրինական հետպահ խոսքն է ուղղում ժողովովին:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Ամեն տարի Ս. Վարդանանց հերոսամարտի օրը մենք նշում էին հինգշաբթի օրը: Այս տարի, սակայն, տոնում ենք Երկուշաբթի: Անկախ այդ օրացուցային փոփոխության ժողովրդի հոծ ներկայությունը, թե՛ Եկեղեցու և թե՛ այստեղ՝ Վեհարանում, պերճախոս ապացուցն է այն բանի, որ Ս. Վարդանանց հերոսների հիշատակը անմահ է ժողովրդի հոգում և ամեն տարի մեծ շուրջով տոնախմբում է այն: Որը, անջուշ, ուրախալի և գնահատելի է:

Ես գոհությամբ ներկա եղանական գոհաբանական մաղթանքին, որը տեղի ունեցավ Մայր տաճարում, և այդ արարողությունը մեր Եկեղեցու ամենագեղեցիկ և սրտառու արարողություններից մեկն է: Լսեցինք նաև սրբապան պատարագիչի բովանդակալից և հավուր պատշաճի քարոզը: Ես հիմա՝ այս տեղ մեր հոգևոր ձեմարանը կավաներապեց այս փոքրիկ հանդիսությունը՝ Ծրագիրը շատ երկար չտևեց և գուցե դա առավելություն է:

«Ովանոր ձեմարանի դասախոս, պատմական գիտությունների դրվագը պրա. Սիմոն Գրքաշարյանի պատմական շատ հարուստ տվյալներով, կուր բովանդակությամբ և հայրենասի-

րական ոգով արտասանած խոսքը և մեր ուսանողների արտասանություններն ու երգերը, կարծում եմ, հասան իրենց նպատակին:

Մաթուր եմ, որ այսուհետև, ինչքան որ մեկ Աստված կյանք պարզեցի, ամեն տարի հանդիպենք այս առիթով և հիշենք հայոց պատմության ամենահերոսական դրվագը: Վարդանանց պատերազմը, ինձ թվում է որ իր ժամանակ գուցե այնքան մեծ արձագանք չի ունեցել, ինչքան այսօր: Նման պատմական իրադարձությունները, որոնք շատ քիչ են ժողովուրդների կյանքում, անցնող տարիների և ժամանակի ընթացքում դառնում են ավելի հմաստալից և այժմեական: Իրոք, անցել են ավելի քան 1500 տարիներ և գուցե տրամարանական կիներ, եթե այն մոռացության մատնվեր, մոռացության են տըրվել պատմական այլ իրադարձություններ և դեպքեր և կամ մնացել են միայն պատմության գրքերի էջերում: Ամեն ինչ չէ որ մենք հիշատակում ենք այնպես, ինչպես Վարդանանց հերոսամարտը: Փաստորեն հայերը պարտվեցին և ոչ միայն պարտվեցին, այև նահատակվեցին և ապրոլներն են ներարկվեցին տանջանքների ու աքսորների՝ հենց կաթողիկոսի գլխավորությամբ: Իր ժամանակ Վարդանանց պատերազմը հայ ժողովորի համար դարձավ համատարած մի ողբերգություն:

Բայց ինչո՞ւ ենք ասում բարոյական հաղթանակ: Ես կարծում եմ, որ Վարդանանց պատմերազմը ավարտվեց ոչ միայն բարոյական հաղթանակով, այլ այն միաժամանակ իրական հաղթանակ էր, որովհետև հայերը, ճիշտ է նահատակվեցին կովի դաշտում, սակայն նրանք ծովնկի չեկան և դիմադրական պայքարները, կոհվներն ու մարտերը շարունակվեցին երկար ժամանակ: Ըմբռատությունը հետպետե տարածվեց ժողովրդի լայն խավերում, հակառակ ողբերգական ծանր պայմանների, հակառակ պարսիկների վայրագ միջոցառումների: Ինչպես մենք գիտենք պատմությունից, դիմադրողական մարտերը և կոհվները տևեցին ուղիղ երեսուն տարի: Եվ Ավարայրի ճակատամարտից երեսուն տարի հետո, մեկ որիշ Մամիկոնյան, այս անգամ Վահան Մամիկոնյանը, նոր բանակներով կարողացավ հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու անոնից պատախանել պարսիկներին, որ իրենք չեն ենթարկվի պարսիկ արքաների հրահանգներին և հավատարիմ կմնան քրիստոնեական կրոնին, իրենց հոգու անկախությանն ու պատությանը:

Այս նոր կովի մեջ պարսիկները պարտվեցին: Եվ որպես պարտված կողմ ստիպված եղան Նվարակում ստորագրելու հայերի և պարսիկների միջև կնքված այն դաշնագիրը,

որտեղ պարսիկները ընդունեցին հայերի պահանջները: Եվ աղջախով վերականգնվեց քրիստոնեությունը Հայաստան աշխարհում որոշ քաղաքական և տնտեսական վիճումներով, սակայն հիմնականը փրկվեց:

Ուրեմն ճիշտ կլինի ասել, որ Նվարսավի դաշնագրով և Վահան Մամիկոնյանի պայքարով, Վարդանանց պատերազմը հասկ իր հաղթական լրումին: Վարդանանց պատերազմը սկսվեց Վարդանով, Վարդանի նահատակությամբ և վերջացավ Վահանի հաղթանակով:

Այս տարի Վարդանանց հերոսամարտի հիշատակը մի քիչ տարբեր իմաստ ու նշանակություն ունի՝ մեկ՝ հայ ժողովրդի համար, որովհետև այս տարի, ինչպես գիտեք, լրանում է 1915 թ. հայոց ցեղասպանության 70 տարին: Մեր երկրում և արտասահմանում, ինչպես ամեն ապրիլի 24-ին, այս տարի ևս, մեծ հուզումով և լավատեսությամբ պիտի նշվի այդ տարեթիվը այն գիտակցությամբ, որ ոչ միայն հայերը չմոռանան մեր դարի սկզբի մեծագոյն ոճիրը, այլև որպեսպի օտարները հետպիետե մեծ զանգվածներով իմանան և հետաքրքին հայոց այդ մեծ ողբերգության մասին: Եվ ինչքան ես տեղյակ եմ, իրոք, որ բացառիկ հանդիսավորությամբ և համապային չափերով ամբողջ աշխարհում պիտի նշվի այս տարվա ապրիլի 24-ը: Գրեթե բոլոր երկրներում, որ այդ հնարավորությունը կա, նաև ոչ հայ՝ օտար մտավորականներ, գրողներ, նովինիկ պետական մարդիկ իրենց խոսքը պիտի ասեն ի նպաստ հայ ժողովրդի արդար դատի: Ահա թե ինչո՞ւ այս տարի մեր Վարդանանց հերոսամարտի տոնը բացառիկ նշանակություն է ստանում, որովհետև շուտով, երկու ամիս հետո, պիտի նշվի հայոց ցեղասպանության օրը: Եվ ոչ միայն այսքանը, եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչումից հետո մեծ ոգևորությամբ և ցնծությամբ պիտի նշվի նաև Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 40-ամյակը:

Տեսեք, կարծեք զուգահեռներ են զնոս, Վարդանանց պատերազմ՝ նահատակություն, Վահանյան պատերազմ՝ հաղթություն: Այս դեպքում էլ. 1915 թ. ցեղասպանություն և նորից նահատակություն, մյուս կողմից Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակ:

Վարդանանց և Վահանյանց պատերազմներից անցել են ավելի քան 1500 տարիներ, բայց այդ պատերազմները չեն մոռացվել, որովհետև նրանք իրենց մեծ սիրանչներով, նահատակությամբ և հաղթանակով ծառայեցին հայ ժողովրդի հիմնական շահերին. Նրա գոյատևման՝ Փիվիկական և ոգեկան գոյատևման, որովհետև հայերը պաշտպանեցին իրենց հավատքը և ոգու ապատությունը:

Մեր պարագային էլ. թեև Սարդարապատի հերոսամարտը տեղի ունեցավ բոլորովին այլ գաղափարախոսության և քաղաքական այլ պայմաններում, քան Վարդանանց պատերազմը, սակայն ինչքան էլ տարբերություններ եղած լինեն, նրանք բոլորն ել զոհվել են միևնույն ժողովրդի գոյատևման, հոգու և խղճի պատության համար: Ահա թե ինչո՞ւ Վարդանանց և Վահանյանց պատերազմներն այժմեական են մեկ համար:

Եվ եկրակացությունը պետք է լինի այն, որ մաղթենք հազար ու մի փորձություններից ազատված մեր այս փոքրիկ Մայր Հայաստանին՝ այսօրվա վերածնված, աճող և ծաղկող Հայաստանին և հայ ժողովրդին, որ պատերազմը այլև չսպառնա նրանց կյանքին և նրանց ապագային, թող շարունակեն իրենց ստեղծագործ կյանքը միշտ հիշելով և սուրբ պահելով մեր նախնյաց հաղթանակներն (ու սիրագործությունները, և ինչո՞ւ չեն, նաև ողբերգությունները):

Մեր օրինությունը Վարդանանց հերոսամարտին ընկած նահատակների հիշատակին, մեր օրինությունը այսօրվա վերածնված Մայր Հայաստանին:

**ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

